Հայտարարություն

Մրցույթներ՝ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ», «Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր-մանկապարտեզ», «Լեռնապատի մանկապարտեզ», «Եղեգնուտի հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:
Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ունեցող քաղաքացիները:

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիները Փամբակի համայնքապետարանի աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում
2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
4) ինքնակենսագրություն.
5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները՝ բնօրինակների հետ միասին:
6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).
8) նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիրը):

Մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Աշխատակազմը փաստաթղթերի պատճենները համեմատում է բնօրինակների հետ եւ ընդունում դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 22.05.2023թ. ներառյալ ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 16:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի մայիսի 31-ին Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի շենքում, հասցեն՝ գ. Փամբակ, 1 փող, 23շ.:

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Վահագնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր հաստիքի համար՝ ժամը 10:00-ին.
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր հաստիքի համար՝ ժամը 12:00-ին.
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Լեռնապատի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր հաստիքի համար՝ ժամը 14:00-ին.
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Եղեգնուտի հեքիաթ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր հաստիքի համար՝ ժամը 16:00-ին:

Տեղեկությունների համար զանգահարել 07775-88-63, 09311-08-21 հեռախոսահամարներով: